

Պ. Հակոբյան

Ո՞ՐՆ Է «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ի
ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔԸ

«Տեղեկագրի» 1957 թ. մայիսյան համարում տպագրվել է բանասեր Ա. Սեիդ-Ջադեի հոդվածը՝ Ն. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպի կենտրոնական հերոս Աղասու իրական կյանքի հանգամանքների մասին:

Չենք տարակուսում, որ Ա. Սեիդ-Ջադեն իր այդ հոդվածը գրելիս հետապնդել է ազնիվ նպատակներ. նա ցանկացել է օգնել Արովյանի ստեղծագործությունն ուսումնասիրող այն բանասերներին, որոնց մատչելի չեն պարսկական աղբյուրները, և իր համոզմամբ լրացուցիչ տվյալներ է հաղորդում «Վերք Հայաստանի» վեպի հերոս Աղասու կերպարի համար նախատիպ ծառայած անձնավորության մասին:

Եվ հիրավի, հոդվածագիրը մի ուշագրավ քաղվածք է բերել պարսիկ պատմագիր և Թավրիզի երբեմնի բեգլարբեգ Դումբուլիի «Մասսիր-է-Սուլթանիե» գրքից, ուր նրա ասելով հիշրայի 1226 կամ քրիստոնեական 1811 թ. տակ, ի շարս ալլոց, նկարագրված է և հետևյալ անցքը (նույնությամբ արտագրում ենք հոդվածից, գիտակցելով հանդերձ, որ թարգմանությունը խիստ անկատար է — Պ. Հ.):

«Խոյեցի սարրաղների մի ֆոուջ (գունդ), գնդապետ էսխան-խանի հրամանատարությամբ, որոշ թվով գոլյամ-հրացանակիրների հետ միասին հրաման ստացան (Աբրաս-Միրզայից — Ս. Զ.) պատժել Ղարաբաղի Ախ-Բանի հայերին: Եվ չնայած այն բանին, որ Կըզ-Կալա բերդը Ղարաբաղի հայտնի բերդերից մեկն է, հիշյալ հայերը այն բավականաչափ հուսալի շահմարեցին և նույն օրերին (երբ նրանց մոտենում էին պարսից զորքերը — Ս. Զ.) այդ վայրից տեղափոխվեցին մի չափազանց անմատչելի վայր, որը բոլոր կողմերից 12 ֆարսախ երկարությամբ շրջապատված էր ջանգլավով (մանր, անանցանելի մացառներով — Ս. Զ.): Սարբազները և գոլյամ-հրացանակիրները Զիրանի ազատ ճանապարհով (sic!) անվեհեր կերպով հասան նրանց, կատաղի մարտի բռնվեցին և ի վերջո նրանց կանայք ու երեխաները գերվեցին, նրանց բարիքն ու անշարժ գույքը կողոպտվեցին, իսկ նրանց տղամարդկանցից շատերը սպանվեցին: Դրանից հետո Խուդաֆերին կամուրջով անցնող ճանապարհով վերադարձան Կարաջաղաղ, և ճանապարհին նույն հայ տղամարդկանց մնացորդները, որոնք ջանգլալի մեջ մտնելով փրկվել էին հաղթական զորքի ճանկերից, երկու օրվա ընթացքում ջոկատներով թաքնվում էին ջանգլալի ծառերի մեջ և ապա, սովորաբար, անսպասելիորեն հարձակվում էին (պարսից զորքերի վրա — Ս. Զ.) ու հրաձգություն կատարում, կռվում էին բոլոր ուժերով, հենց որ կարող էին, այնքան ժամանակ, մինչև Աղասի անունով նրանց ավագն սպանվեց: Դրանից հետո մնացածները այլ ելք չունենալով և ակամա ձեռք քաշելով գույքից, կանանցից ու երեխաներից, ստիպված եղան վերադառնալ միևնույն վայրը...» (86):

Մեջրերած հատվածն հետաքրքիր է անցյալի հայ ազատագրական շարժումների պատմությունն ուսումնասիրողների համար, սակայն այն հեռու է «Վերք Հայաստանի» վեպի պատմական հիմքից:

Եթե խորամուխ լինենք Դումբուլիի հաղորդած տեղեկությունների մեջ, չենք կարող չնկատել, որ նրանք ո՛չ մի կապ չունեն Արովյանի վեպի հիմքում ընկած անցքերի ու անձնավորությունների հետ: Մինչդեռ «Վերք Հայաստանի» վեպում պատկերվող իրական անցքերը կատարվել են Երևանյան խանությունում (Քանաքեռ գյուղում, Երևան քաղաքում և այլն), հակառակ դրան՝ Դումբուլին խոսում է հարյուրավոր կիլոմետրեր Քանաքեռից հեռու գտնվող Ախ-Բան հայկական գյուղի բնակիչների և նրանց ավագ Աղասու մասին, որոնք ապստամբվել էին պարսից բռնակալության դեմ: Ահա սրանց դիմադրությունը կոտրելու և հնազանդեցնելու համար էլ ուղարկվում է էսխան-խանի պատժիչ ջոկատը: Երկօրյա համառ կռիվներից հետո Ախ-Բանի հայերը պարտվում են, շատերը սպանվում են, նրանց կանայք, երեխաները գերվում են, կայքն ու գույքը հափշտակվում: Սպանվում է նաև նրանց պետը՝ Աղասին:

«Վերք Հայաստանի» վեպի հետ քիչ թե շատ առնչվող կողմն այստեղ այն է, որ թե՛ վեպի կենտրոնական հերոսը և թե՛ Ախ-Բանի հայերի առաջնորդը նույն անունն են կրել՝ Աղասի. թեպետ «Վերքի» Աղասին ապրել է մինչև 1827 թ. իսկ Ախ-Բանի հայերի առաջնորդը սպանվել է, ըստ հոգվածագրի, դեռևս 1811 թ.: Ի՞նչ ալիքներ միայն, ուրիշ և ո՛չ մի ընդհանրություն...¹:

Հոգվածագիրը անձնանունների այդ պատահական նմանությունից, — և ո՛չ թե այդ անձնավորությունների նույնությունից, որի հաստատումը նախ և առաջ պիտի լիներ նրա խնդիրը, — ահա թե ի՞նչ ենթադրություններ է անում.

«Աղասու կյանքի իրադարձություններն Արովյանը շարադրում է ո՛չ միայն ո՛չ խիստ ժամանակագրական կարգով, այլև ընդհանրապես այն պատմական շրջանակներից դուրս, որոնց մեջ իրականում ընթացել է Աղասու կյանքը» (84):

Այնուհետև, փորձելով ճշմարիտ ժամանակագրության տակ դնել «Վերք Հայաստանի» վեպի հիմքում ընկած դեպքերը, հոգվածագիրը շարունակում է:

«Հյուսիս-խան Կաջարը Երևանի սարդար է նշանակվել 1797 թ. (sic!)՝ Դրանից առաջ նա հյուսիսային բեգլարբեգ էր: Խան է մնացել մինչև բուն 1827 թ.: Թեև Արովյանն այդ մասին խոսում է արդեն այն բանից հետո, երբ աղջիկն առևանգվել էր և Աղասին կազմակերպել էր իր ջոկատը, բայց հաշվի առնելով, որ իրադարձությունները այսպես թե այնպես ծավալվում էին մոտա-

¹ Պարսկական մի ուրիշ աղբյուր (Մուստաֆա Մուհամմեդ Թաղիի «Կաջարների պատմություն» գիրքը — Պ. Հ.), որի պարսկերեն բնագիրն իր հոգվածին է կցել Ա. Սևիդ-Ջադեն, — անդրադառնալով Կրդ-Կալայի շրջակայքում կատարված անցքերին, հետաքրքրական է, որ չի հիշատակում ո՛չ ղեկավար կատարման ճիշտ թվականը, ո՛չ Ախ-Բանի հայերի պետի անունը, ո՛չ էլ վերջինի սպանված լինելու փաստը: Մենք միանգամայն իրավունք ունենք կասկածելի համարելու Դումբուլիի հաղորդած դեպքերի ճշմարտապատմությունը, թեպետ հիմա այդ մի կողմ ենք թողնում:

Ահա այդ վկայությունը. «Այն ժամանակ Նայիր Օլ Սուլթանեն ղնդապետ է հասն-խանին մի խումբ հրաջանակիր-ղուլմաների հետ Ախրանի հողերը զործուղեց: Նա էլ հարձակվեց Կրդ-Կալայի վրա, որը <1 անրնթ.>, և այդ տեղի բնակիչների հետ, որ հայեր էին, կռիվ տվեց ու նրանց հաղթեց և այդ մարդկանց կանանց ու զավակներին և ինչքն ու ունեցվածքը վերցրած խոզափերին կամուրջով վերադարձավ Կարաչեղաղ (Ղարաղաղ), իսկ այդ խումբը քոչեց և շտապեց ղեկի Կարաչեղաղ» (թարգմանել է բնկ. Բ. Չուղասրգյանը):

վորապես այդ ժամանակ, կարելի է հիմք ընդունել և գտնել, որ դա Հյուսեին-խան Կաջարի խանության սկիզբն էր...»։ «Կան նաև մի շարք այլ նկատառումներ, որոնք նույնպես խոսում են այն մասին, որ այդ իրադարձությունները, ըստ Արովյանի, պետք է տեղի ունեցած լինեն Հյուսեին-խան Կաջարի խանության սկզբում...» և այլն (էջեր 84 և 85)։

Այս տողերի միտքն այս է. «Վերք Հայաստանի» վեպի հիմքում ընկած իրադարձությունները տեղի են ունեցել Հյուսեին-խան Կաջարի խանության սկզբին, այսինքն՝ 1797 թ., ուրեմն և, ինչպես հողվածագիրն է պնդում, «Աբովյանը... չի եղել այդ իրադարձությունների ականատեսը» (84). որ նա «վիպականացնելով Աղասուն տվյալ դեպքում հեռացել է իրականությունից» (ն.տ.)։

Այսքանը բավական չհամարելով Ա. Սեիդ-Ջադեն առանց հավաստի փաստերի պնդում է. «Աղասու ջոկատը գործում էր Ղարաբաղի շրջաններում և առավել աչքի ընկնողն էր... ցանկանալով ավելի գունավորել Աղասու ջոկատի հատուկ միսիան, Աբովյանը նրա ջոկատը նկարագրել է ազգային տեսակետից միատարր կազմով» և այլն (89)։

Այնուհետև նա գրում է. «Թեև վեպի տված տեղեկությունները հնարավորություն չեն տալիս թեկուզ մոտավորապես որոշելու Աղասու մահվան տարին, ապա այժմ մենք լիովին համոզվում ենք, որ նա սպանվել է 1811 թ. վերջերին, որի մասին ինքը՝ Աբովյանը մեզանից ավելի լավ գիտեր» (89)։ «Աղասու սպանությունը թերևս, պետք է վերագրել 1812 թ.» (90)։ «Այժմ մենք համոզվում ենք, որ Աղասին 1827 թ. հոկտեմբերի 1-ին ոչ մի կերպ չէր կարող գտնվել Երևանի բերդի պարսիկների մոտ» (ն.տ.)։ «Մինչև այժմ նշում էին, որ Աղասին, որպես ռուսական զինվորական, ծառայության մեջ է եղել Կրասովսկու ջոկատում... նման տեսակետը չի համապատասխանում իրականությանը» և այլն (91)։

Այսպես ուրեմն՝ «Վերքի» հիմքում ընկած դեպքերը կատարվել են 1797 թ.։ Աղասին գործել է Ղարաբաղում և սպանվել է 1811 կամ 1812 թ.։

Հենց պատմական առումով հողվածագրի ասածների մեջ բացակայում է ճշմարտությունը։

Հայտնի է, որ Ղարաբաղի խանությունը Ռուսաստանին է միացվել տակավին 1805 թ.։ Պարսկաստանի ջանքերը, վերստին գրավելու այդ հողերը, անցան ապարդյուն։ Ավելի ուշ, 1813 թ. Գյուլստանի դաշնագրով Պարսկաստանն ընդմիջտ հրաժարվեց Ղարաբաղից։

Այս պատմական ճշմարտության լույսով երբ նայում ենք հողվածագրի պնդումներին և նրա սկզբնաղբյուր 'Դումբուլիի հաղորդած տվյալներին, չենք կարող չկասկածել նրանց հավաստիության վրա։ Մի բնական հարց է ծագում։ Ի՞նչ հարկ կար, որ Աղասին պարտիզանական կոիվներ մղեր Ռուսաստանի տիրապետության տակ անցած Ղարաբաղում, ընդդեմ պարսիկների, և կամ թե, ի՞նչ գործ ունեն ռուսների կողմից արդեն նվաճված տերիտորիայում՝ Ղարաբաղում, այն էլ 1811 կամ 1812 թ. վերջերին։ Էսխան-խանի պատժիչ ջոկատը, որն առանց ռուսական զորքերի հետ ընդհարվելու ասպատակություններ էր

¹ Հետաքրքիր է, որ հողվածագիրը ուզում է նշել Աղասու սպանության ամիսն անդամ՝ «Աղասու սպանությունը տեղի է ունեցել մոտավորապես 1811 թ. վերջերին, նույնները կամ ղեկավարներ ամիսներին» (89)։ Նա մոռանում է, որ Էսխան-խանի պատժիչ ջոկատը հետապնդել է Աղասուն դեռ ձմեռը չեկած, իսկ ղեկավարներին, ինչպես հանրահայտ է, ձմեռ է արդեն։

սփռում այս ու այնտեղ, անարգել զաղթեցնում էր հայերին մի տեղից մյուսը: Գծվար չէ դիտել, որ պատմական փաստերը Դումրուլիի գրքում աղավաղված են, իսկ հողվածագիրը փարել է դրանց:

Այնուհետև՝ Երևանյան խանության պատմությունն ուսումնասիրող ամեն ոք, որ կարդացել է սկզբնաղբյուրները, չի կարող չտեսնել, որ հողվածագիրը մեղանշում է ճշմարտության առաջ, պնդելով թե Հյուսեին-խանը Երևանի սարդար է նշանակվել 1797 թ. և նույն տարում էլ տեղի են ունեցել «Վերք Հայաստանի»-ի հիմքում ընկած իրադարձությունները: Անցյալի մեր հեղինակավոր պատմաբանները, ինչպես նաև Հյուսեին-խան-սարդարի իշխանությանը ժամանակակից անձինք, միարևրան վկայում են, որ նա Երևանի սարդար է նշանակվել 1807 թ., այսինքն՝ ուղիղ տաս տարի հետո այն թվականից, որ նշում է հողվածագիրը:

«Կուսակալ կացոյց Երևանայ... հուսկ բնաւից Հիւսէին խան՝ Քուրդ մականուանեալ, այլ Ղաճար տոհմիւ ի 1807, օգնական ունենալով զեղբայր իւր Հասան, որք ի քսանամեայ իշխանութեան իւրեանց...», — գրել է Ալիշանը¹, կամ՝ «Հիւսէյին խան զաջարն եկն յԵրևան յամի 1807, հանդերձ եղբարք իւրով Հասանաւ ընդ իշխանութեամբ Շահին Պարսից, և ապա տիրել զինուորութեանցն Ռուսաց՝ անց, զնաց անդրէն ի Պարսս 1827», — գրում է ղեպերին ժամանակակից Հ. Մահաթունյանը:

Նույնն է անուղղակիորեն հաստատում նաև Ի. Մուսկերը²:

Այսպիսով, երբ ղեպերը 10 տարով բերում ենք և տ, 1797-ից 1807 թ. ակնհայտ է դառնում թույլ տրված ժամանակադրական սխալը: Պարզ է դառնում, որ «Վերք Հայաստանի» հիմքում ընկած ղեպերը ոչ մի կապ չունեն նրա նշած ժամանակների հետ:

Ավելի անվերապահ են հողվածագրի վերջին պնդումները, ըստ որոնց «Վերքի» համար նախատիպ ծառայած իրական Աղասին սպանվել է ղեռնա 1811 կամ 1812 թթ. և ոչ մի մասնակցություն չի ունեցել Հայաստանի ազատագրության համար մղվող պայքարին և Երևանի գրավմանը: Որպեսզի իր այս ոչ ճիշտ եզրահանգումները մի կերպ համոզելի դարձնի, հողվածագիրը քննադատում է Պերճ Պոռչյանին, որ գրի է առել Աղասու մասին իր հոր հուշերը, արհամարհում է Շալգինին, որը վերապատմել է հին երևանցիների հիշողությունները Աղասու մասին, բուն փաստերն ու տվյալներն, իհարկե, անտեսելով:

Ո՞րն է պատմական ճշմարտությունը և միթե՞ հողվածագրի բերած «նոր տվյալները» հավաստի չեն: Այդ հարցը պարզելու համար նախ տեսնենք, թե ի՞նչ իրական ղեպեր ու անձնավորություններ է նկատի ունեցել Արովյանն իր վկայը գրելիս, և արդյոք ղեթ հեռավոր առնչակցություն ունե՞ն նրանց հետ հողվածում արած «հայտնագործությունները»:

Բարեբախտարար Աղասու մասին եղած փաստերը միայն «Վերք Հայաստանի»-ում չեն ամփոփված: Վեպից բացի Արովյանը գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Բոդենշտեդի համար գրել է նաև մի բացատրական, ուր ման-

¹ Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 308:

² Յ. Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառացի Արարատայ, հատ. II, էջմիածին, 1842, էջ 140:

³ И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения Русской империи, С.-Петербург, 1852, стр. 167 и 449.

րամասնորեն պատմում է, թե «Վերք Հայաստանին» գրելիս ի՞նչ իրական դեպքեր է նկատի ունեցել ինքը և ու՞րեք են իր վեպի գլխավոր հերոսների համար նախատիպ ծառայած անձնավորությունները¹:

Իր գերմանացի բարեկամի միանգամայն բնական հարցին, «ու՞վ է այս արկածախնդիր, այս տարօրինակ Աղասին...» — Արովյանը պատասխանում է. նա օտար վարդ չէ, իմ հայրենակիցն է, Քանաքեռից, իմ ժամանակակիցն ու հեռավոր ազգականը: Այն բարբարոսական շրջանում, երբ Հայաստանն իր վերջին շնչումն էր գտնվում, և այն էլ իրեն՝ խեղճ ժողովրդին, չէր պատկանում, ի միջի այլոց, շատ հաճախ, Երևանի պարսից սարդարի հարեմի համար բռնություններ քաշում-տանում էին հայ մատաղահաս աղջիկներին, թուրքացնում, որի ժամանակ այդ հերոսուհիներից շատերը, արհամարհելով փարթամությունն ու շքեղ կյանքը, գերադասում էին նահատակի պսակ ընդունել, քան թե զոհ դառնալ անասնական կրքերին: Աղասու քրոջն ևս բաժին ընկավ այդ սարսափելի ընտրությունը: Ահավոր վայնասունի մեջ ծնողներն ու ազգականները փորձեցին ընդդիմանալ իրենց հարազատ զավակի առևանգմանը, իսկ տմարդի ֆարաշները դաժանությամբ ու բռնությամբ ուզում էին քաշել-տանել աղջկան, քանի որ նա արտակարգ գեղեցիկ էր, ցավով բռնված Աղասին թափով անցավ ամբոխի միջով, իր սրով սպանեց ֆարաշներից մեկին, մյուսներին մահացու վերքեր հասցրեց, որովհետև նրանք ընդամենը երեք հոգի էին, և մինչ նրան կկարողանային բռնել, անասելի վտանգների ենթարկվելով փախավ ռուսի հողը և ռուսների հետ միասին վերադարձավ, երբ վերջիններս սկսեցին պարսկական պատերազմը: Նրա քույրը մեծ գումարով փրկագնվեց ու դեռ ապրում է, դժբախտ ծնողները, ընդհակառակը, մեռան բանտում, երկարամյա բանտարկությունից հետո, սարսափելի մահով...»²:

Դիտելով Արովյանի այս վկայությունները քննության առարկա հողվածում արժարժված խնդիրների առնչակցությամբ, մենք ստանում ենք այդ հողվածի եզրահանգումները միանգամայն հերքող հետևյալ, չափազանց կարևոր, փաստերը.

ա) «Վերք Հայաստանի» վեպի սյուժեի հիմքում, ինչպես որոշակիորեն ասված է, Արովյանը դրել է իր ծննդավայրում՝ Քանաքեռ գյուղում, իր ազգականներից մեկի ընտանիքի հետ կապված աղետալի դեպքերը, հետևաբար և ոչ մի խոսք չէր կարող լինել այնտեղ (և իրականում չկա էլ...) Ղարաբաղի Ախ-Բան գյուղի հայերի և վերջինների առաջնորդ Աղասու՝ պարսկական կառավարության դեմ մղված 1811 թ. կռիվների մասին:

բ) Աղասին կենդանի է եղել ընդհուպ մինչև 1827 թ. կեսերը, մասնակցել է ռուս-պարսկական պատերազմին (1826—27) և գտնվելիս է եղել գեպի Երևան արշավող ռուսական զորքերի շարքերում, հետևաբար և «Վերք Հայաստանի» վեպի կենտրոնական հերոսի համար նախատիպ ծառայած քանաքեռցի Աղասու և 1811 թ. սպանված և նույն անունը կրող Ախ-Բան գյուղի հայերի առաջնորդի միջև ոչ մի ընդհանրություն չկա:

¹ Բողենշտեդի համար դրած այս բացատրականը ժամանակին սիրահոժար կերպով տրամադրված է եղել Ա. Սևիդ-Ջադին, վերջինս, սակայն, փոխանակ ուշադրությամբ ուսումնասիրելու այն, արհամարհել է և գրել. «Այստեղ բնավ չեն շոշափվում Աղասու դրածունեությունը և մահվան թվագրման մեղ հետաքրքրող հարցերը» (84):

² Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VII, Երևան, էջ 360:

դ) Աղասին Աբովյանի ժամանակակիցն է:

Իսկ դրանք նշանակում են, որ Աբովյանն իր վեպում ոչ թե դիտավորյալ կերպով Աղասու կյանքի հանգամանքները ներկայացրել է պատմական շրջանակներից դուրս, այլ միանգամայն ճշմարտացի և պատմական անցքերին համապատասխան:

Ինչպես կարելի է անտեսել այս անկասկած ճշմարտությունները և պնդել թե Աղասին «սպանվել է 1811 թ. վերջերին, որի մասին ինքը՝ Աբովյանը, մեզանից ավելի լավ գիտեր» (էջ 89) և, այնուհանդերձ, վերախմբագրում էր պատմական փաստերը:

Որ «Վերք Հայաստանի» վեպի հիմքում ընկած են քանաքեռցի Աղասու կյանքի անցուդարձերը և նրա քրոջը սարգարի հարեմը քաշելու պատմությունը, այդ պարզ երևում է մի ուրիշ վավերագրից ևս, որին ծանոթ չէ հոգվածագիրը: Մեր խոսքը վեպի ծրագրային նշումների մասին է: Դրանք հրատարակված են դեռևս 1955 թ.¹ Ի շարս այլ նշումների, այնտեղ կարդում ենք. «Աղասու սպանելը վասն ֆաշելուն ֆվեռ տուր»: Նշումներից ուշագրավ է և մի ուրիշը. «Der englische Reisende (Անգլիացի ճանապարհորդ)»: Առաջին նշման մեջ ճշտորեն ակնարկվում է «Վերքի» հիմքում ընկած իրական դեպքը: Դժվար չէ կռահել, որ երկրորդի մեջ էլ խոսքը անգլիացի ճանապարհորդ Ջեմս Մորիսի մասին է: Վերջինիս «Հաջի Բաբայի արկածները» գրքում նկարագրված է սարգարի հարեմը աղջիկ քաշելու մի պատմություն, որը շատ է հիշեցնում «Վերքի» հերոսուհի Թագուհու առևանգման պատմությանը: Աբովյանի վեպի և Ջեմս Մորիսի գրքում պատմված անցքերի այդ նմանության վրա դեռ տասնամյակներ առաջ ուշադրություն է դարձրել հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը², ծանոթ չլինելով, իհարկե, Աբովյանի վկայությանը: Այս բոլորից մի տրամաբանական եզրակացություն է բխում: Իր վեպը գրելիս Աբովյանը աչքի առաջ ուներ իրական դեպքեր, կատարված քանաքեռցի Աղասու և նրա քրոջ հետ, սակայն գիտակցորեն այլ փոխհարաբերությունների մեջ էր դնում նրանց, հետևելով մասամբ Ջեմս Մորիսի գրքում նկարագրված դիպվածին: «Վերքի» մյուս ծրագրային նշումների մեջ հիշվում են Երևանը, Անին, զանազան այլ վայրեր, որոնք կապված էին վեպի կենտրոնական հերոսի համար նախատիպ ծառայած իրական Աղասու կյանքի հանգամանքների հետ, բայց ոչ մի ակնարկ չկա Ղարաբաղի Ախ-Բանի հայերի մասին: Այդ միանգամայն բնական էր ու տրամաբանական, որովհետև «Վերքի» հիմքում ընկած դեպքերը կատարվել էին ոչ թե 'Հարաբաղում, այլ Երևանյան խանությունում, Աբովյանի հայրենի Քանաքեռ գյուղում և, ինչպես ստորև կտեսնենք, 1821 թ.:

Չնայած հոգվածագիրը փորձում է Աբովյանի վեպի մեջ «անախորհրդմունք» գտնելու, «Վերք Հայաստանի» վեպում այդպիսիք չկան: Որպես հավաստապատում պատմական վեպ այնտեղ միանգամայն ճշտորեն նշվում է, թե երբ ևն կատարվել վեպի հիմքում ընկած իրական դեպքերը, որոնք ամեն անգամ կարելի է հավաստել պատմական վավերագրերով, անկախ նրանից՝ ուղղակիորեն հիշվում է գրանցում Աղասու անունը, թե ոչ:

¹ Տե՛ս Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, Երևան, 1953, էջ 164: Վավերագրի բնագիրը պահվում է ՀՍՍՌ ԳԱ Դրականության և արվեստի թանգարանում, Խ. Աբովյանի արխիվ, 150:

² Տե՛ս Հ. Թումանյանի Աբովյանի վեպին նվիրված սեպագիր ուսումնասիրությունը՝ Երկերի ժողովածուի 6-րդ հատորում (տպագրվում է):

«Վերքից» հայտնի է, որ Աղասին հայրենի գյուղը թողել է բարեկենդանին (փետրվար ամիս — Պ. Հ.), ձմեռը մնացել է Պարնի գյուղում, իսկ ամառը մի որոշ ժամանակ անց է կացրել լոռվա սարերում, որտեղից և անցել ու հաստատվել է Անիում և նույն օրերին խայտառակ ջարդ տվել Հասան-խանին, որը վերադառնում էր Ղարսից: Աբովյանն այս վերջին դեպքը արձանագրել է ժամանակագրական ճշտությամբ. «Հուլիսի 23-ին 1821-ին էր, որ հայոց երևելի հին քաղաք Անի երեք հարրերից ավելի կտրիչ զորք... տեսավ»¹: Այնուհետև մանրամասն նկարագրելով Աղասու հաղթանակը և խանի զորքերի պարտությունը, Աբովյանն ավելացնում է. «էն ժամանակ ես ինքս էջմիածին էի, որ Հասան-խանն էնպես փախած եկավ անց կացավ»²: Կամ թե՛ «Ղզլբաշը էս միջոցումը Ղարսա վրա կռիվ էր դուս գնացել, ու ասած քսան ու մեկ թվին էր...»³:

Որ 1821 թվականին տեղի է ունեցել Պարսկաստանի և Թուրքիայի միջև պատերազմ, դա ակնհայտ փաստ է⁴: Ինչպես նաև վիճարկելի չէ այն, որ իսկապես 1821 թվականին Աբովյանն ապրել է էջմիածնի վանքում: Իսկ այս բոլորից հետևում է, որ 1821 թ. փետրվարին էլ կատարվել է Աղասու քրոջը Սարդարի հարեմը քաշելու դեպքը:

Վեպից հայտնի է, որ Շամքորի ճակատամարտի նախօրեին Աղասին գալիս է գեներալ Վ. Մաղաթովի մոտ: Վերջինիս նախ ասում է. «...Հինգ տարի ա, Բայազդու ու Ղարսու գլխու դուշ չի՝ անց կացել, սար ու ձոր ոտի տակ եմ տվել...»⁵: Հայտնի է, որ Շամքորի ճակատամարտը տեղի է ունեցել 1826 թ. սեպտեմբերին: Ուրեմն՝ 5 տարի դրանից հանելով տեսնում ենք դարձյալ, որ Աղասին հայրենիքից հեռացել է 1821 թվականին⁶:

Վեպում կան ուրիշ տվյալներ, սակայն բերվածները լիովին բավարար են հաստատելու համար, որ «Վերք Հայաստանի» վեպի սյուժեի հիմքում ընկած դեպքը տեղի է ունեցել 1821 թվականի բարեկենդանին, այսինքն՝ փետրվար ամսին:

Վեպի տվյալներով հնարավոր է ճշտել նաև Աղասու տարիքը: Ֆարաշներին սպանելու ժամանակ (1821 թ.) նա հիշվում է 20 տարեկան («...քսան տարին անց<էր> կացել...»⁷: Ուրեմն՝ նա ծնվել է 1800 թվականին: Սա միանգամայն համապատասխանում է Աբովյանի վկայությանը, որ գտնվում է Բողենշտեդին գրած նամակում, որտեղ նա Աղասուն անվանում է «իմ ժամանակակիցը»: Իսկապես 1800 թվականին ծնված Աղասին Աբովյանի ժամանակակիցն էր: Իսկ եթե հետևեինք Ա. Սեիդ-Ջադեին, դուրս կգար, որ «Վերք Հայաստանի» հիմքում

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, Երևան, 1948, էջ 168:

² Նույն տեղում, էջ 170:

³ Նույն տեղում, էջ 167:

⁴ Մ. Սևոբ, Исторический памятник..., стр. 444—445.

⁵ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 175:

⁶ Պաշտոնական դրադրություններում հիշվում է, որ հերակի Շամքորի ճակատամարտի նախօրեին Վ. Մաղաթովի մոտ են գալիս հայ կտրիճներ: Հիշվում է նաև, որ սեպտեմբերի 9-ին Մաղաթովի բանակն է գալիս մի հայ և կարևոր լուրեր բերում. «Նույն օրը երեկոյան մի հայ ձին բշած եկավ և հաղորդեց իշխանին...» և այլն (տես Խ. Աբովյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, հատ. I, էջ 259 և 261): Վերջինիս անունը չի հիշատակված: Արդյոք դա հենց Աղասին չի եղել, որն իրականում նույն ձևով՝ ձին բշած է մտնում Վ. Մաղաթովի բանակը (հատ. III, էջ 185) և արևոթ լուրեր հաղորդում նրան:

⁷ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 15:

ընկած դեպքերը տեղի են ունեցել 1797 թվականին: Եվ, որովհետև, ինչպես իրականում, այնպես էլ վեպում Աղասին դրանից հետո ապրել է 5—6 տարի, ապա նա սպանված պիտի լիներ 1802 կամ 1803 թթ., այսինքն Արովյանի ծննդյան տարուց շատ առաջ: Նման պարագայում միթե՞ Արովյանը կպնդեր, որ Աղասին իր ժամանակակիցն է, կամ էլ Ներսիսյան դպրոցում աշակերտ եղած ժամանակ՝ 1824—1826 թթ. ժամանակամիջոցում, Թիֆլիսում ինքը հանդիպել և զրուցել է Աղասու հետ:

Եզրափակե՛նք. Ա. Սեիդ-Ջադեի հոգվածը ոչ մի նոր տվյալ չի պարունակում Աղասու անձնավորության մասին և խճճում է անառարկելի ճշմարտություններ:

* Սեիդ-Ջադեի կողմից լուսարանվող փաստաթուղթը Դոմբուլիի «Մասսիր—Երևանի» զրբից հետաքրքիր է և արժանի ուշադրության: Սակայն Պ. Հակոբյանի հոգվածում բերված փաստերը համոզիչ կերպով ցույց են տալիս, որ փաստաթղթում նկարագրված դեպքերն առնչություն չունեն «Վերք Հայաստանի» վեպի հերոս Աղասու հետ: Խմբ.: